

ՀԵՏԱՄՏԵԼՈՒ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ՄԻՍԱԿ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուսումնական աշխատանքները
համակարգող պրոֆեսոր, իրավաբանական
գիտությունների թեկնածու, դոցենտ
DOI: 10.63925/18294847-2026.bl21-12

Ամփոփագիր: Հոդվածը նվիրված է ՀՀ քրեական օրենսգրքի 196.1-ին հոդվածով
նախատեսված հանցանքի՝ հետամտելու (ստակիինգի) քրեաիրավական բնութագրի
համակողմանի վերլուծությանը:

Հեղինակը վերլուծում է հետամտելու հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ
հատկանիշները, մեկնաբանում է օրենսդրի կողմից գործածված առանձին եզրույթներ:
Առանձին քննարկման առարկա են դառնում հետամտելն այլ հանցանքների հետ
համակցությամբ որակելու հարցերը, պարզաբանվում են հետամտելու ծանրացնող
հանգամանքները:

Կատարված ուսումնասիրության արդյունքներով հեղինակը ներկայացնում է
օրենսդրական առաջարկություն, ինչպես նաև հետամտելու որակման առանձին
հարցերին վերաբերող սեփական դիրքորոշումները:

Բանալի բառեր. Հետամտելը, ընտանեկան և կենցաղային բռնություն,
հոգեբանական բռնություն, պարբերաբար, ստակիինգ, կիբերստակիինգ,
տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներ:

1. Ներածություն:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2024 թվականի ապրիլի
12-ին ընդունված և հուլիսի 1-ից ուժի մեջ մտած օրենսդրական փաթեթով Հայաստանի
Հանրապետության քրեական օրենսգրքը (այսուհետ՝ քր. օր.) լրացվել է 196.1-ին
հոդվածով, որով քրեական պատասխանատվություն է սահմանվել հետամտելու համար:
Նույն օրենսդրական փաթեթով հետամտելը նախատեսվել է նաև որպես ընտանեկան և
կենցաղային բռնության դրսևորում: Այսպես, «Ընտանեկան և կենցաղային բռնության
կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց

պաշտպանության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում հետամտելը նշված է որպես հոգեբանական բռնության առանձին դրսևորում¹:

Օրենսդրական փաթեթի ընդունման հիմնավորման մեջ նշվել է՝ «Ընտանեկան բռնության տարածված դրսևորումներից է նաև վերահսկող վարքագծի կիրառումը կամ հետամտումը, որը ՄԱԿ-ի կողմից ևս սահմանվում է որպես ընտանեկան բռնության տեսակ, իսկ Եվրոպայի խորհուրդն այն առաջարկում է քրեականացնել որպես կանանց դեմ բռնության դրսևորում: Սակայն այս հասկացությունը՝ որպես բռնության տեսակ և հանցակազմ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ, ինչի հետևանքով բռնության տվյալ դրսևորումը որևէ իրավական հետևանք չի ենթադրում: Չկան նաև նախատեսված պաշտպանական անհրաժեշտ իրավական հիմքեր՝ վերը նշված բռնության տեսակից զոհերին պաշտպանելու համար»²: Հետամտելը քրեականացնելու անհրաժեշտությունը նշված է «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 34-րդ հոդվածում³:

Հետամտելը՝ որպես հակաիրավական վարքագծի դրսևորման ձև, միջազգային ասպարեզում առավել հայտնի է որպես «ստալկինգ» և «կիբերստալկինգ»: Քեմբրիջի բառարանում ստալկինգը (stalking) բնորոշվում է որպես հանցագործություն, որը դրսևորվում է որոշակի ժամանակահատվածում որևէ մեկին ապօրինաբար հետևելու և հսկելու ձևով⁴:

Հետամտելու քրեականացումը վկայում է օրենսդրի կողմից տվյալ արարքի հանրային վտանգավորության գնահատման և մարդու դեմ ուղղված հանցագործությունների արդեն սահմանված տեսակներից դրա տարբերության մասին: Միևնույն ժամանակ, հետամտելու քրեականացումն արդիական է դարձնում այդ հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների մեկնաբանմանը և հանցանքի որակման առանձնահատկություններին առնչվող հարցերը: Նշված հարցերի վերաբերյալ գիտականորեն մշակված մոտեցումների բացակայությունը կարող է հանգեցնել ինչպես հանցավոր չհամարվող միջանձնային կոնֆլիկտների դեպքում անհիմն քրեական

¹ Հետամտելը կհամարվի ընտանեկան և կենցաղային բռնության դրսևորում, եթե այն կատարվի ընտանիքի անդամների կամ զուգընկերների կամ ընտանիքի նախկին անդամների կամ նախկին զուգընկերների միջև:

² Տե՛ս <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=14679&Reading=0> (վերջին այցելության ամսաթիվ 09.02.2026 թ.):

³ Տե՛ս <https://rm.coe.int/168046246d> (վերջին այցելության ամսաթիվ 09.02.2026 թ.):

⁴ Տե՛ս <https://dictionary.cambridge.org/dictionary/english/stalking> (վերջին այցելության ամսաթիվ 09.02.2026 թ.):

հետապնդումների, այնպես էլ իրապես հանցավոր արարքներից տուժածների անբավարար քրեաիրավական պաշտպանության:

Սույն աշխատանքի նպատակն է վերլուծել հետամտելու հիմնական հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները, այդ հանցանքը ծանրացնող հանգամանքները, քննարկել հետամտելու որակման առանձին հարցերն ու ներկայացնել առաջարկություններ հետամտելու որակման և այդ հանցակազմի օրենսդրական ձևակերպման կատարելագործման վերաբերյալ:

2. Հետամտելու հանցակազմի օբյեկտիվ հատկանիշները:

2.1. *Հետամտելու օբյեկտը:* Քր. օր-ի 196.1-ին հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում հետամտելը սահմանվել է հետևյալ կերպ՝ «Հետամտելը՝ անձին հետևելը, տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով, նրա բնակության, աշխատանքի կամ ուսման, զբաղմունքի վայր այցելելու միջոցով կամ այլ եղանակով անցանկալի հաղորդակցության մեջ ներգրավելը կամ ներգրավելու փորձ կատարելը, անձնական իրերի վրա հետքեր թողնելը, անձի տվյալներով առցանց հաշիվներ բացելն է, եթե այդ արարքը կատարվել է պարբերաբար և անձի մեջ վախ կամ անհանգստություն է առաջացրել իր կամ իր մերձավորի անվտանգության համար կամ ստիպել է էապես փոխել իր կենսակերպը, կամ այն փոխելու իրական անհրաժեշտություն է առաջացրել»:

Հանցագործության տեսակային օբյեկտն անձի ազատության, պատվի, արժանապատվության, ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Հանցագործության հիմնական անմիջական օբյեկտն անձի հոգեկան անձեռնմխելիության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Հանցագործությունը կարող է ունենալ նաև լրացուցիչ օբյեկտներ՝ պատվի ու արժանապատվության, ֆիզիկական անձեռնմխելիության, սեփականության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները:

2.2. Հետամտելու օբյեկտիվ կողմը:

2.2.1. *Երկրնտրելի արարքները:* Հետամտելու օբյեկտիվ կողմը երկրնտրելի է. հանցանքը դրսևորվում է հետևյալ արարքներից առնվազն մեկի պարբերաբար կատարմամբ՝

- 1) անձին հետևելը,

- 2) անձին անցանկալի հաղորդակցության մեջ ներգրավելը կամ ներգրավելու փորձ կատարելը,
- 3) անձնական իրերի վրա հետքեր թողնելը,
- 4) անձի տվյալներով առցանց հաշիվներ բացելը:

Հետամտելու առաջին դրսևորումն անձին հետևելն է, որն արտահայտվում է առանց նրա համաձայնության նրա տեղաշարժերի, կենսակերպի, սոցիալական շրջապատի կամ առօրյա գործունեության դիտարկմամբ, որի արդյունքում տուժածն ունենում է մշտական հսկողության և անձնական ինքնավարության կորստի զգացողություն: Անձին հետևելը դրսևորվում է նրա կողքով քայլելով կամ ավտոմեքենայով հետապնդելով, ուղեկցելով, առանց նրա համաձայնության տեղաշարժը կամ առօրյան լուսանկարահանելով, տեսաձայնագրելով, տարբեր սարքերի կամ հավելվածների միջոցով տեղաշարժը հսկելով կամ արձանագրելով: Եթե հետևելը զուգորդվել է տուժածի անձնական կամ ընտանեկան կյանքի գաղտնիությունը խախտելով կամ տուժածի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի գաղտնիությունը խախտելով, ապա հանցավորի արարքը համակցությամբ պետք է որակել նաև քր.օր-ի համապատասխանաբար 204-րդ կամ 206-րդ հոդվածներով:

Հետամտելու երկրորդ դրսևորումն անձին անցանկալի հաղորդակցության մեջ ներգրավելն է կամ ներգրավելու փորձ կատարելը: Այս դեպքում օրենսդիրը որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է նախատեսել նաև հանցանքի կատարման երկրնտրելի եղանակները՝ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելը, տուժածի բնակության, աշխատանքի կամ ուսման, զբաղմունքի վայր այցելելը կամ այլ եղանակը:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները (Information and Communication Technologies, ICT) մեթոդների, միջոցների և համակարգերի ամբողջություն են, որոնք նախատեսված են տեղեկատվության տարբեր տեսակների հավաքման, ստեղծման, մշակման, փոխանցման, տարածման, պահպանման, օգտագործման, ներկայացման և պաշտպանության համար⁵: Տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով անձին անցանկալի

⁵ Տե՛ս **Орлянская Н.П., Нагоев А.В.** Проблемы проектирования и внедрения информационной системы // Научный электронный журнал КубГАУ. № 01(9), 2014, էջ 4:

հաղորդակցության մեջ ներգրավելը կամ ներգրավելու փորձ կատարելը կարող է դրսևորվել, օրինակ, տարբեր սոցիալական ցանցերի, բջջային հավելվածների, էլեկտրոնային փոստի միջոցով անձին հաղորդագրություններ ուղարկելու, մեկնաբանություններ թողնելու կամ պարզապես նրան զանգահարելու, կարճ հաղորդագրություններ գրելու ձևով: Հաղորդագրությունների բովանդակությունը կարող է տարբեր լինել: Պարտադիր չէ, որ դրանք սպառնալիքներ կամ այլ բացասական վերաբերունք պարունակող բովանդակություն ունենան, կարևորն այն է, որ դրանք ստացողի համար լինեն անցանկալի: Ընդ որում՝ օրենսդիրը նշված արարքն ավարտված է համարում ոչ միայն այն դեպքում, երբ տուժածը ներգրավվել է իր համար անցանկալի հաղորդակցության մեջ (օրինակ՝ խնդրել է, պահանջել է իրեն չանհանգստացնել), այնպես էլ այն դեպքում, երբ տուժածը հաղորդակցության փորձերը թողել է անպատասխան:

Տուժածի բնակության, աշխատանքի կամ ուսման, զբաղմունքի վայր այցելելով անձին անցանկալի հաղորդակցության մեջ ներգրավելը կամ ներգրավելու փորձ կատարելը կարող է դրսևորվել, օրինակ, նշված վայրերում տուժածին մոտենալու և նրան ներկայանալու, տարբեր թեմաներով նրա հետ խոսելու (ծանոթության առաջարկ անել, որևէ տեղ հրավիրել, սեր խոստովանել, հեռախոսահամար կամ այլ կոնտակտային տվյալներ ուզել), նշված վայրերում ներկա անձանց (համակուրսեցիներ, աշխատակիցներ) մոտ որպես տուժածի ընկեր կամ ամուսին ներկայանալու և նրանց միջոցով տուժածին որևէ տեղեկատվություն փոխանցելու և այլ ձևերով: Ընդ որում՝ քրեաիրավական առումով նշանակություն ունի ոչ թե հաղորդակցության բուն բովանդակությունը (հաղորդակցությունը կարող է նաև չստացվել), այլ տուժածի անձնական տարածք ներխուժման բուն փաստը:

Եթե հանցավորը տուժածի բնակության վայր այցելելիս, վերջինիս կամքին հակառակ կամ կամքն անտեսելով, նաև ապօրինի մուտք է գործում նրա բնակարան, ապա հանցավորի արարքն անհրաժեշտ է համակցությամբ որակել նաև քր. օր-ի 207-րդ հոդվածով (բնակարանի անձեռնմխելիությունը խախտելը):

Հետամտելու հանցակազմի վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը սահմանել է տուժածին անցանկալի հաղորդակցության մեջ ներգրավելու կամ ներգրավելու փորձ կատարելու եղանակների բաց ցանկ՝ օգտագործելով «կամ այլ եղանակով» ձևակերպումը: Այլ եղանակով տուժածին անցանկալի հաղորդակցության

մեջ ներգրավելը կամ ներգրավելու փորձ կատարելը կարող է դրսևորվել, օրինակ, տուժածի ընկերների, բարեկամների միջոցով նրան նամակներ, բացիկներ ուղարկելով, տուժածի տեսադաշտում գտնվող վայրերում (օրինակ՝ տուժածի բնակարանի պատուհանից երևացող շենքի պատին, տուժածի աշխատավայրին մոտ գտնվող կանգառի վրա) նրան հասցեագրված գրառումներ կատարելով, թռուցիկներ թողնելով, տուժածի մերձավոր ազգականների աշխատանքի կամ ուսման վայր այցելելով և այնտեղ նրան փնտրելով: Օրինակ, ըստ ՇԴ/0027/01/25 դատական գործով դատավճռի՝ Գ.Մ.-ն, ով Լ.Ա.-ին հետամտելու համար դատապարտվել է քր. օր-ի 196.1-ին հոդվածի 1-ին մասով, այցելել էր ոչ միայն Լ.Ա.-ի բնակության վայր, այլև նրա երեխաների դպրոց, ինչն առաջացրել էր Լ.Ա.-ի վախը նաև իր երեխաների անվտանգության համար⁶:

Եթե հանցավորը տուժածին որևէ եղանակով հաղորդակցության մեջ ներգրավելիս կամ դրա փորձ կատարելիս նրա հասցեին հնչեցրել է սպառնալիքներ կամ վնաս է պատճառել նրա առողջությանը, ապա համապատասխան հատկանիշների առկայության դեպքում հանցավորի արարքը պետք է համակցությամբ որակել նաև որպես հոգեկան ներգործություն, ֆիզիկական ներգործություն, առողջությանը համապատասխան ծանրության վնաս պատճառել և այլն:

Հետամտելու երրորդ դրսևորումը տուժածի անձնական իրերի վրա հետքեր թողնելն է: Նման գործողությունները, որպես կանոն, ցուցադրական բնույթ են կրում և ուղղված են հոգեբանական ազդեցությանը, տուժածի խոցելիության և վտանգի զգացողության ձևավորմանը: Այդպիսի գործողությունները ցույց են տալիս տուժածի անձնական տարածքում հանցավորի ներկայությունը՝ առանց տուժածի իմացության և համաձայնության:

Մեր կարծիքով՝ անհրաժեշտ է որոշակիորեն ընդլայնել հետամտելու այս դրսևորման օրենսդրական ձևակերպման շրջանակները:

Նախ՝ հանցավորը կարող է հետքեր թողնել ոչ միայն տուժածի անձնական իրերի (հագուստ, պայուսակ, հեռախոս, գիրք, օրագիր և այլն), այլև օրինակ, բնակարանի դռան, պատուհանների, պատերի, հողամասի, ցանկապատի, ավտոտնակի վրա: Հայերենում «իր» բառը նշանակում է որևէ կարգի առարկա (առավելապես կենցաղային, աշխատանքի ոլորտում, նաև ճամփորդության ժամանակ հետը վերցվող զգեստներ,

⁶ Տե՛ս <https://datalex.am/?app=AppCaseSearch&page=default&tab=criminal> (վերջին այցելության ամսաթիվ 11.02.2026 թ.):

անձնական գործածության առարկաներ և այլն)⁷: Եթե տուժածի բնակարանը, հողամասը կամ ավտոտնակը հետամտելու հանցակազմի համատեքստում դիտարկենք որպես անձնական իրեր, ապա, կարծում ենք, կկատարենք քրեաիրավական նորմի տարածական մեկնաբանում, ինչն անթույլատրելի է: Ուստի առաջարկում ենք քր. օր-ի 196.1-ին հոդվածի 1-ին մասում «անձնական իրեր» ձևակերպումը փոխարինել «անձի տնօրինության, տիրապետման, օգտագործման կամ պահպանության տակ գտնվող գույք» ձևակերպմամբ:

Բացի այդ, հանցավորը տուժածի գույքի վրա կարող է թողնել ոչ միայն հետքեր (կենսաբանական ծագում ունեցող՝ թուք, մեզ, արյուն և այլն, մեխանիկական՝ քերծվածքներ, կտրվածքներ, կոտրվածքներ և այլն)⁸, այլև որոշակի առարկաներ (նվեր, բացիկ և այլն): Հայերենում «հետք» բառը նշանակում է ոտքի թողած դրոշմը գետնի, հատակի վրա, որևէ բանի շարժման կամ հարվածի հետևանքով որևէ մակերեսի վրա բացված փոս, ակոս, գիծ, մատների, ձեռքի և այլնի թողած դրոշմը որևէ բանի վրա, որևէ բանի մնացորդ⁹: Իհարկե փոխաբերական իմաստով «հետք»՝ նշանակում է նաև որևէ գործունեության, իրադարձության մնայուն հետևանք՝ արդյունք¹⁰, և հանցավորի կողմից տուժածի հողամասում թողնված առարկան՝ որպես այդ վայրում հանցավորի այցելության հետևանք, կարող է դիտարկվել որպես հետք, սակայն իրավական նորմերը մեկնաբանելիս բառերի փոխաբերական իմաստների վրա հիմնվելն անթույլատրելի է: Ուստի առաջարկում ենք քր. օր-ի 196.1-ին հոդվածի 1-ին մասում «հետքեր թողնել» ձևակերպումը փոխարինել «հետքեր կամ առարկաներ թողնել» ձևակերպմամբ:

Ներկայացված առաջարկությունները միտված են նրան, որ հետամտելու համար սահմանված քրեաիրավական արգելքի շրջանակները համապատասխանեն այդ հանցանքի՝ գործնականում հնարավոր վտանգավոր դրսևորումներին, և իրավակիրառողը քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքն իրագործելու համար ստիպված չլինի, օրինակ, փորձել հիմնավորել, որ հետամտողի

⁷ Տե՛ս **Աղայան Է.Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան: «Հայաստան» Հրատարակչություն, Երեւան, 1976, էջ 506:

⁸ Տե՛ս **Թումասյան Դ.Ա., Գրիգորյան Գ.Թ.**, ՀՀ քրեական իրավունք. Հատուկ մաս երեք հատորներում. Հատոր առաջին (հոդվածներ 133-251). – Երևան: Լիմուշ հրատարակչություն, 2025, էջ 449:

⁹ Տե՛ս **Աղայան Է.Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան: «Հայաստան» Հրատարակչություն, Երեւան, 1976, էջ 865:

¹⁰ Տե՛ս նույն տեղը:

կողմից տուժածի բնակարանի դռան մոտ դրված ծաղկեպսակը տուժածի անձնական իրի վրա թողնված հետք է:

Հետամտելու վերջին՝ չորրորդ դրսևորումն անձի տվյալներով առցանց հաշիվներ բացելն է: Դա կարող է ուղղված լինել տուժածի անձի նմանակմանը, նրա վարկաբեկմանը կամ նրա անունից կամ նրա հետ հաղորդակցությանը: Հետամտելու այս ձևի հանրային վտանգավորությունը պայմանավորված է առանց անձի համաձայնության նրա անձնական տվյալներն օգտագործելու և նրա հոգեբանական ու սոցիալական անվտանգության համար լրացուցիչ վտանգ ստեղծելու, նրա պատվին ու արժանապատվությանը հնարավոր վնաս պատճառելու փաստով: Եթե անձի տվյալներով առցանց հաշիվներ բացելը զուգորդվել է տուժածի անձնական կամ ընտանեկան կյանքի գաղտնիությունը խախտելով, ապա հանցավորի արարքը համակցությամբ պետք է որակել նաև քր. օր-ի 204-րդ հոդվածով:

Ինչպես արդեն նշել ենք, քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի առկայության համար պարտադիր է, որ հանցավորը վերոնշյալ երկընտրելի արարքները կատարի պարբերաբար: Քր. օր-ի 3-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի համաձայն՝ պարբերաբար նշանակում է նույնաբնույթ արարքը երկու կամ ավելի անգամ կատարելը: Կարծում ենք՝ պարտադիր չէ, որ հանցավորը պարբերաբար կատարի հենց միևնույն երկընտրելի արարքը, օրինակ՝ երկու կամ ավելի անգամ այցելելով տուժածի բնակության վայր՝ անցանկալի հաղորդակցության մեջ մտնի նրա հետ: Օրենսդիրը քրեականացրել է հետամտելու հավասարազոր դրսևորումներ, որոնց միավորում է դրանց օբյեկտիվ բնույթը՝ տուժածի անձնական տարածք ներխուժելը և սուբյեկտիվ ուղղվածությունը՝ տուժածի վրա հոգեբանական ազդեցություն գործելը: Հետևաբար, «պարբերաբար» հատկանիշն առկա կլինի քր. օր-ի 196.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ հետամտելու երկու կամ ավելի երկընտրելի դրսևորումների ցանկացած համադրության դեպքում:

Ընդ որում՝ եթե հանցավորը միևնույն անձի նկատմամբ հետամտելու նույն կամ տարբեր դրսևորումները կատարում է միասնական դիտավորությամբ, ապա, անկախ այդ դրսևորումների քանակից, արարքը պետք է որակել որպես մեկ շարունակվող հանցագործություն (քր. օր-ի 3-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետ): Այսպես օրինակ՝ ԵԴ1/0812/01/25 դատական գործով կայացված դատական ակտում նկարագրված են Վ.Ն.-ի կողմից իր հետ համատեղ չբնակվող կնոջը՝ Ա.Ս.-ին հետամտելու տարբեր

դրսևորումների յոթ դրվագ, որոնք կատարվել են 2024 թվականի հուլիսի 1-ից մինչև հոկտեմբերի 24-ն ընկած ժամանակահատվածում, և նշված բոլոր դրվագները՝ որպես մեկ շարունակվող հանցագործություն, որակվել են քր. օր-ի 196.1-ին հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով¹¹:

2.2.2. Հանրորեն վրանգավոր հետևանքները և պատճառական կապը: Հետամտելու հանցակազմը նյութական է. հանցանքն ավարտված համարելու համար բավարար չէ, որ հանցավորը պարբերաբար կատարի հոդվածում նշված երկրնորելի արարքները, անհրաժեշտ է նաև, որ դրանց կատարման արդյունքում վրա հասնի հոդվածով նախատեսված երկրնորելի հետևանքներից առնվազն մեկը: Մասնավորապես, անհրաժեշտ է հաստատել, որ հանցավորի արարքը՝

1) անձի մեջ վախ կամ անհանգստություն է առաջացրել իր կամ իր մերձավորի անվտանգության համար, կամ

2) անձին ստիպել է էապես փոխել իր կենսակերպը, կամ այն փոխելու իրական անհրաժեշտություն է առաջացրել:

Վերոնշյալ հետևանքները թույլ են տալիս սահմանազատել հետամտելու քրեորեն պատժելի դրսևորումներն այնպիսի արարքներից, որոնք թեև միջանձնային փոխհարաբերությունների և սոցիալական նորմերի տեսանկյունից անընդունելի են, սակայն հանցավոր չեն:

Հոգեբանական գրականության մեջ վախը բնորոշվում է որպես հուզական վիճակ, որն արտացոլում է մարդու պաշտպանական կենսաբանական արձագանքը սեփական կյանքի կամ բարեկեցության համար իրական կամ կարծեցյալ վտանգ զգալու ժամանակ: Ի տարբերություն վախի, որն առաջանում է որպես տվյալ պահին առկա վտանգին հուզական արձագանք, անհանգստությունը՝ որպես հուզական վիճակ, կապվում է ապագայում կանխատեսվող վտանգի, անհաջողության սպասման հետ, որին բնութագրական է անորոշությունը¹²:

Ընդ որում՝ հանցավորի արարքների հետևանքով կարող է տուժածի անհանգստությունն առաջանալ ոչ միայն իր, այլև իր մերձավորի անվտանգության

¹¹ Տե՛ս <https://datalex.am/?app=AppCaseSearch&page=default&tab=criminal> (վերջին այցելության ամսաթիվ 11.02.2026 թ.):

¹² Վախի և անհանգստության տարբերությունների, պատճառների և արտահայտման ձևերի մասին առավել մանրամասն տե՛ս, օրինակ, **Павлович И.Е.** Эмоции и чувства. СПб., Питер, 2001, էջեր 142-159, **Романов В.В.** Юридическая психология: Учебник. – М., Юрист, 1988, էջեր 138-148:

համար: Թեև քր. օր-ի 196.1-ին հոդվածի 1-ին մասում նշված չէ տուժածի մերձավոր ազգականների մասին, սակայն քննարկվող հանցակազմի համատեքստում տուժածի մերձավոր ազգականներն ընդգրկվում են նրա մերձավորների շրջանակի մեջ:

Այսպես, քր. օր-ի 3-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն՝ մերձավոր ազգական է համարվում, անկախ համատեղ բնակության հանգամանքից, ամուսինը, նախկին ամուսինը, ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (այդ թվում՝ որդեգրված, խորթ, հոգեզավակ), եղբայրը, քույրը (այդ թվում՝ խորթ), պապը, տատը, թոռը, որդեգրող ծնողի կամ խնամատար ծնողի ամուսինը կամ նախկին ամուսինը, ամուսնու կամ նախկին ամուսնու ծնողը, ինչպես նաև ամուսնու կամ նախկին ամուսնու ծնողի համար՝ փեսան կամ հարսը: Ամուսին կամ նախկին ամուսին է համարվում նաև փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող կամ գտնված անձը:

Քր. օր-ի 3-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի համաձայն՝ մերձավոր է համարվում յուրաքանչյուր ոք, որի կյանքը, առողջությունը, շահերը կամ բարեկեցությունը կարևոր են անձի համար՝ պայմանավորված այդ անձի հետ ունեցած անձնական հարաբերություններով:

Ինչպես տեսնում ենք, «մերձավոր ազգական» հասկացությունն օրենսդիրը սահմանել է օբյեկտիվ չափանիշի (ազգակցական կապի) հիման վրա, իսկ «մերձավոր» հասկացության հիմքում դրվել է սուբյեկտիվ չափանիշը (անձի համար կարևորությունը): Եվ եթե հանցավորի արարքների հետևանքով առաջացել է տուժածի անհանգստությունն իր մերձավոր ազգականի (օրինակ՝ երեխայի կամ ծնողի) անվտանգության համար, ուրեմն տուժածի համար կարևոր են նրա կյանքը, առողջությունը և շահերը: Հետևաբար՝ հետամտելու հանցակազմի համատեքստում տուժածի երեխան և ծնողը նրա համար ոչ միայն մերձավոր ազգականներ են, այլև մերձավորներ:

Հարկ է նշել, որ տուժածի մեջ վախի կամ անհանգստության առաջացման փաստը հաստատելիս իրավակիրառողը պետք է հաշվի առնի ոչ միայն տուժածի սուբյեկտիվ ընկալումը, այլև օբյեկտիվ չափանիշները՝ հանցավորի գործողությունների բնույթը, ինտենսիվությունը, տևողականությունը և այլն:

Տուժածի կողմից իր կենսակերպի էական փոփոխությունը նրա առօրյա վարքագծում կատարված այն կայուն և էական շտկումներն են, որոնք պայմանավորված են հետամտողի հետագա արարքներից խուսափելու անհրաժեշտությամբ: Դրանց թվին

կարող են դասվել տեղաշարժման երթուղիների, օրվա գրաֆիկի փոփոխումը, սովորական առօրյա շփումներից հրաժարումը, բնակարանից դուրս չգալը, տարբեր միջոցառումներին մասնակցելուց հրաժարվելը, բնակության, աշխատանքի վայրի կամ ժամանցի ձևերի փոփոխությունը, հեռախոսահամարի, էլեկտրոնային փոստի հասցեի փոփոխումը, սոցիալական կայքի անձական էջի փակումը, անձնական անվտանգության լրացուցիչ միջոցների ձեռնարկումը և այլն: Օրինակ՝ ըստ ԵԴ1/0812/01/25 դատական գործով կայացված դատական ակտի՝ Վ.Ն.-ն, ում մեղսագրվել է քր. օր-ի 196.1-ին հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հանցանքի կատարում, ի թիվս այլ արարքների, այցելել է իր հետ համատեղ չբնակվող կնոջ՝ Ա.Ս.-ի աշխատանքի վայր, շինության պատուհանից երեխաների ներկայությամբ հնչեցրել է վիրավորանքներ, սպառնացել, որ շինության պատուհանները կկտորի, մշտապես գտնվել է Ա.Ս.-ի աշխատանքի վայրի հարակից տարածքում՝ առաջացնելով Ա.Ս.-ի վախն ու անհանգստությունն իր և իր մերձավորի անվտանգության համար, և 2024 թ. օգոստոսին Ա.Ս.-ն ստիպված փոխել է իր կեսակերպը՝ դադարեցնելով իր աշխատանքային գործունեությունը նշված աշխատավայրի հասցեում¹³:

Հատկանշական է, որ օրենսդիրը կենսակերպի փաստացի փոփոխությանը հավասարեցնում է դրա իրական անհրաժեշտության առաջացումը: Սա թույլ է տալիս արձանագրել վտանգավոր հետևանքների առկայությունը նույնիսկ այն դեպքերում, երբ տուժածը, գիտակցելով սպառնալիքը, օբյեկտիվորեն հարկադրված է եղել պատրաստվել կենսակերպի էական փոփոխմանը, սակայն իրենից անկախ պատճառներով դեռևս չի իրականացրել համապատասխան միջոցառումները:

Քրեաիրավական տեսանկյունից կարևոր նշանակություն ունի հետապնդող գործողությունների և առաջացած հետևանքների միջև պատճառական կապի հաստատումը: Վախը, անհանգստությունը կամ կենսակերպի փոփոխությունը պետք է լինեն հանցավորի արարքների անմիջական և օրինաչափ արդյունք, այլ ոչ թե պայմանավորված լինեն այլ կենսական հանգամանքներով: Այս առումով, հետևանքների գնահատումը պահանջում է ապացույցների համակցված վերլուծություն՝ ներառյալ տուժածի, վկաների և հանցավորի ցուցմունքները, հանցավորի գործողությունների

¹³ Տե՛ս <https://datalex.am/?app=AppCaseSearch&page=default&tab=criminal> (վերջին այցելության ամսաթիվ 11.02.2026 թ.):

բնույթն ու տևողությունը, ինչպես նաև տուժածի առօրյա վարքագծի փոփոխությունները հաստատող օբյեկտիվ տվյալները:

3. Հետամտելու հանցակազմի սուբյեկտիվ հատկանիշները:

Հետամտելու հանցակազմի սուբյեկտ կարող է լինել 16 տարին լրացած, ֆիզիկական մեղսունակ անձը: Հանցավորը կարող է լինել ինչպես տուժածին անձանոթ անձ, այնպես էլ նրա մերձավոր ազգականը, մերձավորը, նախկին կամ ներկա զուգընկերը և այլն: Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են հետամտողների (ստալկերների) հետևյալ հինգ տիպերը՝ ստալկեր, ում մերժել են, ստալկեր, որ փնտրում է մտերմություն, ոչ ադեկվատ երկրպագու, վրեժխնդիր ստալկեր և ստալկեր-որսորդ¹⁴:

Սուբյեկտիվ կողմից հետամտելը կարող է դրսևորվել ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ: Հետամտումը համարվում է ուղղակի դիտավորությամբ կատարված, եթե հանցավորը գիտակցում է իր արարքի այն փաստական հանգամանքները, որոնք հետամտելու հանցակազմի հատկանիշ են, և հետևանքների առաջացումը նրա նպատակն է եղել կամ նպատակին հասնելու միջոց, կամ նա նախատեսել է դրանց առաջացման անխուսափելիությունը: Հետամտումը համարվում է անուղղակի դիտավորությամբ կատարված, եթե հանցավորը գիտակցում է իր արարքի այն փաստական հանգամանքները, որոնք հետամտելու հանցակազմի հատկանիշ են, և հետևանքների առաջացումը նրա նպատակը չի եղել, սակայն նա նախատեսել է դրանց առաջացման իրական հնարավորությունը, և նրա համար միևնույն է եղել՝ դրանք կառաջանա՞ն, թե՛ ոչ:

Հանցանքի կատարման նպատակը և շարժառիթը հետամտելու հիմնական հանցակազմի պարտադիր հատկանիշներ չեն:

4. Արարքի հակահրավակականությունը: Եթե անձի արարքը պարունակում է հետամտելու հանցակազմի բոլոր հատկանիշները, դա դեռ բավարար չէ այդ արարքը որպես հանցանք որակելու համար: Անհրաժեշտ է նաև հավաստիանալ, որ այդ արարքը հակահրավակական է, այսինքն՝ բացակայում են քր. օր-ի 6-րդ գլխով նախատեսված՝ արարքի հակահրավակականությունը բացառող հանգամանքները:

Օրինակ՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններն օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են իրականացնել

¹⁴ Առավել մանրամասն տե՛ս **Сторублёнкова Е. Г., Самуткин В. Л.** Сталкинг: синдром навязчивого преследования // Пробелы в российском законодательстве. 2017. №6:

«արտաքին դիտում» և «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումները, որոնց բովանդակությունն անձանց հետևելը և առանձին դեպքերի և իրադարձությունների ընթացքը վերահսկելն է: Եթե վերոնշյալ օպերատիվ-հետախուզական միջոցառումներն իրականացնող պաշտոնատար անձի գործողությունները համապատասխանեն հետամտելու հանցակազմին, սակայն իրականացված լինեն օրենսդրության պահանջների պահպանմամբ, ապա այդ գործողությունները չեն կարող որակվել որպես հանցագործություն: Տվյալ դեպքում առկա կլինի քր. օր-ի 39-րդ հոդվածով նախատեսված՝ քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքը՝ օրենքի կամ իրավական այլ ակտերի պահանջները կատարելը:

5. Մեղավորությունը: Քր. օր-ի 23-րդ հոդվածի («Մեղքը») 2-րդ մասը սահմանում է՝ «Սույն օրենսգրքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված արարքը համարվում է մեղավորությամբ կատարված, եթե այն կատարողը գիտակցել է իր արարքի հակաիրավականությունը կամ թեև չի գիտակցել, բայց կարող էր գիտակցել դա»: Ընդ որում՝ քր. օր-ը հիմնվում է արարքի հակաիրավականությունը գիտակցելու կամ դա գիտակցելու կարողության կանխավարկածի վրա (23-րդ հոդվածի 3-րդ մաս):

Եթե հանցավորը, օրինակ, պնդի, թե չի իմացել, որ հետամտելն արդեն քրեականացված է, միևնույն է, նրա արարքը կհամարվի մեղավորությամբ կատարված, քանի որ նա կարող էր գիտակցել է իր արարքի հակաիրավականությունը. հետամտելը քրեականացնող օրենքը եղել է սահմանված կարգով հրապարակված և հասանելի:

6. Հետամտելու ծանրացնող հանգամանքները:

Քր. օր-ի 196.1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հետամտելու ծանրացնող հանգամանքներ են համարվում՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ կատարելը՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ,

2) հղի կնոջ նկատմամբ կատարելը,

3) անչափահասի նկատմամբ կատարելը կամ

4) մերձավոր ազգականի, զուգրնկերոջ կամ նախկին զուգրնկերոջ կողմից կատարելը:

Առաջին ծանրացնող հանգամանքը հանցավորին մեղսագրելու համար անհրաժեշտ է հաստատել, որ հանցավորը տուժածին կամ նրա մերձավոր ազգականին հետամտել է հենց տուժածի պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման կապակցությամբ: Ընդ որում՝ ժամանակային առումով հետամտելը կարող է կատարվել տուժածի նշված գործունեությունից առաջ, ընթացքում կամ հետո:

Հղի կնոջ և անչափահասի նկատմամբ կատարելը, որպես ծանրացնող հանգամանքներ, հանցավորին մեղսագրելու համար անհրաժեշտ է հաստատել ոչ միայն տուժածի՝ համապատասխանաբար հղի կամ անչափահաս լինելը, այլև այն, որ հանցավորը գիտակցել է դա: Եթե հանցավորը կարծել է, թե տուժածը հղի է կամ անչափահաս, սակայն իրականում դա այդպես չէր, ապա հանցավորի արարքը քր. օր-ի 28-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա պետք է որակել որպես համապատասխանաբար հղի կնոջը կամ անչափահասին հետամտելու փորձ (փաստական սխալ):

Չորրորդ ծանրացնող հանգամանքի կապակցությամբ պարզաբանման կարիք ունի «զուգընկեր» եզրույթը, որի սահմանումը քր. օր-ում տրված չէ: Զուգընկերոջ հասկացությունը տրված է «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետում՝ անձ, որի հետ առկա են հարաբերություններ, որոնց հատուկ է սիրային կապը՝ անկախ համատեղ բնակության կամ միմյանց հետ սեռական հարաբերություններ ունենալու հանգամանքից:

7. Եզրակացություն:

Սույն աշխատանքի շրջանակներում կատարված ուսումնասիրության արդյունքներով կարող ենք ներկայացնել հետևյալ առաջարկությունն ու հիմնական եզրահանգումները:

1. Առաջարկում ենք քր. օր-ի 196.1-ին հոդվածի 1-ին մասում «անձնական իրերի վրա հետքեր թողնելը» բառերը փոխարինել «անձի տնօրինության, տիրապետման, օգտագործման կամ պահպանության տակ գտնվող գույքի վրա հետքեր կամ առարկաներ թողնելը» բառերով:

2. Հետամտելու հանցակազմի համար պարտադիր՝ «պարբերաբար» հատկանիշն առկա է ոչ միայն հանցավորի կողմից հենց միևնույն երկրնտրելի արարքը երկու կամ ավելի անգամ կատարելու դեպքում, այլև քր. օր-ի 196.1-ին հոդվածի 1-ին մասով

նախատեսված՝ հետամտելու երկու կամ ավելի երկընտրելի արարքների ցանկացած համադրության դեպքում:

3. Թեև քր. օր-ի 196.1-ին հոդվածի 1-ին մասում նշված չէ տուժածի մերձավոր ազգականների անվտանգության համար տուժածի անհանգստության մասին, սակայն քննարկվող հանցակազմի համատեքստում տուժածի մերձավոր ազգականներն ընդգրկվում են նրա մերձավորների շրջանակի մեջ:

Կարծում ենք, որ ներկայացված օրենսդրական առաջարկության իրագործումը, այն է՝ ընդլայնել հետամտելու հանցակազմի օբյեկտիվ կողմի շրջանակները, իրավակիրառողին հնարավորություն կտա արարքը որակելիս ձեռնպահ մնալ քրեական օրենքի տարածական մեկնաբանումից, իսկ ներկայացված հիմնական եզրահանգումներն ու որակման առանձնահատկությունները հաշվի առնելը թույլ կտա դատաքննչական պրակտիկայում ապահովել հետամտելու վերաբերյալ գործերով քրեական օրենքի ճիշտ և միատեսակ կիրառումը:

УГОЛОВНО-ПРАВОВАЯ ХАРАКТЕРИСТИКА ПРЕСЛЕДОВАНИЯ

МАРКОСЯН МИСАК

Проректор по учебной работе
Образовательного комплекса МВД РА,
кандидат юридических наук, доцент

Статья посвящена всестороннему анализу уголовно-правовой характеристики преступления, предусмотренного статьёй 196.1 Уголовного кодекса Республики Армения, — преследования (сталкинга).

Автор анализирует объективные и субъективные признаки состава преступления преследования, осуществляет толкование отдельных терминов, использованных законодателем. Отдельным предметом рассмотрения становятся вопросы квалификации преследования в совокупности с другими преступлениями, разъясняются отягчающие обстоятельства преследования.

По результатам проведённого исследования автор представляет законодательное предложение, а также излагает собственные позиции по отдельным вопросам квалификации преследования.

Ключевые слова: преследование, семейное и бытовое насилие, психологическое насилие, систематически, сталкинг, киберсталкинг, информационные или коммуникационные технологии.

CRIMINAL AND LEGAL CHARACTERISTICS OF STALKING

MARKOSYAN MISAK

Vice Rector for Academic Affairs,
Educational Complex of the Ministry of
Internal Affairs of the Republic of Armenia,
PhD in Law, Associate Professor

Abstract. The article is devoted to a comprehensive analysis of the criminal and legal characteristics of the offense of stalking as prescribed in Article 196.1 of the Criminal Code of the Republic of Armenia.

The author examines the objective and subjective elements of the corpus delicti of stalking and interprets specific terms employed by the legislator.

Particular attention is paid to the issues concerning the legal qualification of stalking in conjunction with other offenses, and the aggravating circumstances of stalking are clarified. Based on the research findings, the author puts forward a legislative proposal, as well as presents his own positions on certain issues related to the legal qualification of stalking.

Key words: stalking; domestic and family violence; psychological violence; repeatedly; cyberstalking; information or communication technologies.

Գրականության ցանկ

1. **Աղայան Է.Բ.** Արդի հայերենի բացատրական բառարան: «Հայաստան» Հրատարակչություն, Երևան, 1976,
2. **Թումայան Դ.Ա., Գրիգորյան Գ.Թ.** ՀՀ քրեական իրավունք. Հատուկ մաս երեք հատորներում. Հատոր առաջին (հոդվածներ 133-251). – Երևան: Լիմուշ հրատարակչություն, 2025
3. **Орлянская Н.П., Нагоев А.В.** Проблемы проектирования и внедрения информационной системы // Научный электронный журнал КубГАУ . № 01(9), 2014
4. **Павлович И.Е.** Эмоции и чувства. СПб., Питер, 2001
5. **Романов В.В.** Юридическая психология: Учебник. – М., Юрист, 1988
6. **Сторублёнкова Е. Г., Самуткин В. Л.** Сталкинг: синдром навязчивого преследования // Пробелы в российском законодательстве. 2017. №6
7. <http://www.arlis.am>
8. <http://www.parliament.am>
9. <https://datalex.am>
10. <https://rm.coe.int>
11. <https://dictionary.cambridge.org>

Հոդվածը գրախոսվել է 19.02.2026
Ներկայացվել է տպագրության 23.02.2026